

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

17.10.2015

Ք. Իջևան

Ներկա էին գիտխորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կանոնադրության նախագծի քննարկում և ընդունում: / Ջեկուցող՝ Վ. Ալեքսանյան/
2. 2016-2017 ուսումնական տարվանից Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կառուցվածքում ներդրվող «Սոցիալական աշխատանք» և «Տարրական մանկավարժություն» կրթական ծրագրերի ուսումնական պլանների քննարկում և ընդունում: /Ջեկուցող՝ Վ. Ալեքսանյան/
3. 2015-2016 ուստարվա 1-ին միջանկյալ քննությունների ընթացքի մասին:
/Ջեկուցող՝ Վ. Ալեքսանյան/
4. «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Գարիկ Գվիդոնի Մկրտչյանի դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելուն երաշխավորելու հարցը:
/Ջեկուցող՝ Վ. Ավագյան/
5. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Ջեկուցողը հայտնեց, որ ԵՊՀ կարգավիճակի փոփոխությունից հետո /դարձել է հիմնադրամ/ փոխվել է նաև մասնաճյուղի կարգավիճակը: Այն դարձել է ԵՊՀ հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ և հաստատվել է նրա նոր կանոնադրությունը: Ֆակուլտետների կանոնադրություններում ևս տեղի են ունեցել մասնակի փոփոխություններ: Ֆակուլտետի կառավարումն

իրականացվում է միանձնյա և կոլեգիալ սկզբունքների գուգակցմամբ: Կոլեգիալ կառավարման մարմինը՝ ֆակուլտետի խորհուրդը, վերածվել է ֆակուլտետի գիտական խորհրդի: Նպատակահարմար է, որ ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում լինի 21 անդամ: Յուրաքանչյուր ուսումնական տարվա առաջին նիստին պետք է հաստատվի ֆակուլտետի գիտական խորհրդի տարեկան աշխատանքային պլանը: Մեկ ուստարում գիտխորհուրդը պետք է գումարի առնվազն 8 նիստ:

Կազմի մեջ ընդգրկվածների 25%-ը պետք է լինեն ուսանողներ, 25%-ը՝ արտաքին շահառուներ, իսկ 50%-ը պետք է լինեն ֆակուլտետի 4 ամբիոններից ընտրված դասախոսներ: Գիտական խորհրդի ֆունկցիաներն ու իրավասությունները նույնն են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուսյանը: Ելույթ ունեցողները շեշտադրեցին գիտխորհրդի ձևավորման համամասնական սկզբունքը, կարևորեցին արտաքին շահակիցների մասնակցությունը նրա աշխատանքներին: Ֆակուլտետի գործունեության և մասնագիտությունների հետ կապված արտահամալսարանական ու արտաֆակուլտետային մասնագետները, ներկայացնելով անմիջականորեն տարածաշրջանի աշխատաշուկան, իրենց գործնական օգտակար խորհուրդներով կնպաստեն ֆակուլտետի ուսումնական գործընթացի բարելավմանը և արդյունավետացմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Հումանիտար գիտությունների ֆակուլտետի նոր կանոնադրության նախագիծը ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Զեկուցողը ներկայացրեց 2016 թվականին Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կառուցվածքում ներդրվող «Սոցիալական աշխատանք» և «Տարրական մանկավարժություն» կրթական ծրագրերի ուսումնական պլանները: 2016-2017 ուստարում Հումանիտար գիտությունների

Ֆակուլտետի կառուցվածքում ներդրվող «Սոցիալական աշխատանք» և «Տարրական մանկավարժություն» կրթական ծրագրերի վերաբերյալ Վ. Ալեքսանյանը նշեց, որ այդ երկու նոր մասնագիտությունները ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ներդնելիս հաշվի են առնվել մասնագետների, արտաքին շահակիցների, մարզի կրթության ոլորտի պատասխանատուների կարծիքները:

Մեր աշխատակիցների մշտադիտարկումները, դպրոցներից բուհեր հասնող ազդակները միանշանակ վկայում են, որ մարզի դպրոցներում ներկայում սուր կերպով զգացվում է տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների կարիք: Տարիներ շարունակ հիշյալ մասնագիտությամբ նոր ուսուցիչներով դպրոցները համալրում չեն ստանում: Մարզի ուսանողների չնչին տոկոսն է, որ Երևանում և հանրապետության այլ քաղաքներում կրթություն է ստանում «Տարրական կրթություն» մասնագիտությամբ: Նրանց մի մասն էլ այլևայլ պատճառներով չեն վերադառնում մարզ: Այդ պատճառով դպրոցների զգալի մասի տարրական դասարաններում դասավանդում են ոչ մասնագետներ:

ՀՀ-ի, մասնավորաբար տարածաշրջանի աշխատաշուկայում նկատելի է նաև սոցիալական աշխատողի որակավորում ունեցող մասնագետների կարիք: Վերջիններիս գործունեության ոլորտը շատ լայն է: Սոցիալական աշխատողի կարիք այսօր զգացվում է թե՛ հասարակական և թե՛ պետական սեկտորներում: Սոցիալական աշխատանքը նոր մասնագիտություն է, բայց արդեն մեծ պահանջարկ ունի: Նոր ներդրվող մասնագիտությունները իրականացնելու համար այսօր ֆակուլտետում առկա են բոլոր անհրաժեշտ նախադրյալները: Հարկ է նշել, որ ունենք «Սոցիալական աշխատանք» մասնագիտության առարկաների դասավանդող կադրերի կարիք: Այդ բացը կլրացվի տեղական ռեսուրսներով, ինչպես նաև ԵՊՀ-ից հրավիրյալ դասախոսների ուժերով: Պրակտիկայի իրականացման համար մարզում առկա են անհրաժեշտ ենթակառուցվածքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը, Ս. Սարգսյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուսյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը: Ելույթ ունեցողների մեծ մասը կարևորեց քննարկվող կրթական ծրագրերով թողարկվող մասնագետների պահանջարկը աշխատաշուկայում: Ս. Առաքելյանը հավաստեց, որ երկու նոր

կրթական ծրագրերի իրականացումը պահանջում է ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի պատշաճ մշակում: Նա հույս հայտնեց, որ հիշյալ մասնագիտությունների համար դասավանդող կադրերը կապահովվեն հրավիրյալների /հիմնականում կհրավիրվեն ԵՊՀ-ից/ և ներքին ռեսուրսի միջոցով: SOS մանկական գյուղեր «Իջևան» ծրագրի տնօրեն Սպարտակ Սարգսյանը նշեց, որ այսօր նկատելիորեն բարձրացել է սոցիալական աշխատողի դերը: Իջևանում և հարակից գյուղերում ներկայում կա 388 երեխա, 151 ընտանիք, որոնց հետ կատարվում է սոցիալական աշխատանք: Ըստ նրա՝ կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ մարզի սոցիալական աշխատանքի ոլորտում անհրաժեշտ են բազային կրթություն ունեցող որակյալ կադրեր: Նա վստահեցրեց, որ իրենց կազմակերպությունը կարող է աջակցել որոշ առարկաներ դասավանդող կադրեր ապահովելով: «SOS մանկական գյուղեր» ծրագիրը ունի բոլոր անհրաժեշտ պայմանները հիշյալ մասնագիտության ուսանողների պրակտիկայի կազմակերպման համար:

«Տարրական մանկավարժություն» մասնագիտության հետ կապված՝ նշվեց, որ մարզի տարրական դասարաններում առկա է դասվարների խիստ պահանջարկ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

- *Հաստատել 2016թ. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կառուցվածքում ներդրվող «Սոցիալական աշխատանք» և «Տարրական մանկավարժություն» կրթական ծրագրերի ուսումնական պլանները:*

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ կետի վերաբերյալ դեկանը հայտնեց, որ 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումները և քննությունները անց են կացվում սահմանված ժամանակացույցով /հոկտեմբերի 12-24-ը/, սահմանված կարգի համաձայն: Ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը նախապես տրամադրվել են ուսանողներին: Կազմված թեստերը ստորագրվում են ամբիոնի վարիչի և կնքվում ֆակուլտետի դեկանի կողմից: Դրանցով այժմ անցկացվում են քննությունները: Քննական գործընթացի

թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով քննությունների արդյունքները փակցվում են ֆակուլտետների ցուցատախտակներին և տեղադրվում են մասնաճյուղի պաշտոնական կայքէջում: Վ. Ալեքսանյանը նշեց, որ դասախոսների մեծ մասը թեստերը թարմացրել են և ենթարկել բովանդակային փոփոխությունների: Դա օգնում է ավելի ճշգրիտ ստուգելու ուսանողների գիտելիքների և իմացության մակարդակը մասնագիտական առարկաներից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, բ.գ.թ. Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

- *Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի 1-ին միջանկյալ քննությունների ընթացքը համարել բավարար:*

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ կետի վերաբերյալ Վ. Ավագյանը ներկայացրեց «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Գարիկ Գվիդոնի Մկրտչյանի դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելուն երաշխավորելու հարցը: Վ. Ավագյանը հայտնեց, որ հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին: Նա երաշխավորվում է մասնակցելու դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին: Ամբիոնը դիմում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդին՝ հաստատելու ամբիոնի նիստի որոշումը: Վ. Ավագյանը ծանոթացրեց հայցողի անձնական գործի նյութերին՝ նշելով հետևյալը. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի

ասիստենտ, բ.գ.թ. Գարիկ Գվիդոնի Մկրտչյանը գիտական կոչում շնորհող ԲՈՒՀ-ում՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, վեց տարի անընդմեջ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն: Նա մեծ հաջողությամբ դասավանդում է Հումանիտար գիտությունների ֆակուլտետում:

Գարիկ Գվիդոնի Մկրտչյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2011թ.: Վերջին տարիներին նա հրատարակել է գիտական 11 հոդված, 1 գրախոսություն, 1 կազմարարական աշխատանք, 2 թեզիս և ուսումնամեթոդական մեկ աշխատանք:

Նա արհեստավարժ դասախոս է, ունի գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքների մեծ փորձ, հմուտ և գործիմաց է, կարողանում է հետաքրքրություն առաջացնել դասավանդվող նյութի նկատմամբ: Գարիկ Գվիդոնի Մկրտչյանի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների վերջին տարիների արդյունքը միջինը կազմում է 4,12 բալ:

Հաշվի առնելով այդ ամենը Վ. Ավագյանը նշեց, որ բ.գ.թ., ասիստենտ Գարիկ Գվիդոնի Մկրտչյանը լիովին արժանի է դոցենտի գիտական կոչման և առաջարկեց հաստատել «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի նիստի որոշումը և նրան երաշխավորել մասնակցելու դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին:

Այնուհետ Վ. Ալեքսանյանը հարցը դրեց ֆակուլտետի գիտխորհրդի քննարկման:

ԱՄՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. –Բ.գ.թ. Ա. Սարհատյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, կ.գ.թ., ասիստենտ Ս. Խաչատրյանը:

Արտահայտվողները միահամուռ կերպով առաջարկեցին երաշխավորել Գ. Գ. Մկրտչյանին մասնակցելու դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին և հարցը դնել բաց քվեարկության:

Բաց քվեարկությամբ միաձայն որոշվեց.

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ Հաստատել «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի նիստի որոշումը և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Գարիկ Գվիդոնի Մկրտչյանին երաշխավորել մասնակցելու դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին:

բ/ Դիմել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Գիտական խորհրդին՝ միջնորդել ԵՊՀ խորհրդի առջև բ.գ.թ. Գարիկ Գվիդոնի Մկրտչյանին շնորհելու դոցենտի գիտական կոչում:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի ընթացիկ հարցերի մեջ դեկանը հայտնեց, որ 2014-2015 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանում ցուցաբերած անբավարար ակադեմիական առաջադիմության արդյունքներով մասնաճյուղից հեռացման է ներկայացվել «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Էլիտորա Ռադիկի Մխիթարյանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վ. Ալեքսանյան

Ա. Ղևոնդյան